ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1950 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել Ի. Վ. Ստալինի աշխատությունների հայերեն հրատարակությունները բիբլիոգրաֆիան։ Բիբլիոգրաֆիական այդ ցանկի կարիքը մեր գիտնականները, ինտելիգենցիան, պարտիական և սովետական կադրերը, Ի. Վ. Ստալինի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրողները զգում էին։ Այդ առումով գրախոսվող աշխատությունը լուրջ և արժեքավոր գործ է։

* * *

Հայաստանում մարքսիզմի տարածումը սերտորեն կապված է Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի անվան հետ։ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը իրենց մարտական զինակիցներ և աշակերտներ՝ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Միկոյանի և մյուս հայ բոլշևիկների միջոցով հայ ժողովրդի մեջ տարածել են մարքսիզմ-լենինիզմի վեհ գաղափարները։ Ի. Վ. Ստալինի երկերը հայերեն լեզվով առաջին անգամ հրատարակվել են դեռևս 1900-ական թվականներին։ Ստալինյան բոցաշունչ կոչերը, պրոկլամացիաները, թռուցիկներն ու շատ երկեր թարգմանվել ու հրատարակվել են մինչև 1905 թ. առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիան։ 1904 թվի սեպտեմբերին «Պրոլետարիատի կռիվ» թերթի № 4-ում տպագրվել է Ի. Վ. Ստալինի «Ինչպե՞ս է հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը» նշանավոր աշխատությունը։ Ընկեր Ստալինը այդ հոդվածում հիմնավորում և պարզաբանում է պարտիայի թեորիան ու ծրագիրը ազգային հարցի վերաբերյալ, հանդես է գալիս որպես ազգային հարցի խոշոր թեորետիկ, որը վարպետորեն տիրապետում է մարքսիստական գիտելեկտիկական մեթոդին։ Այդ հոչակավոր երկում ընկեր Ստալինը շատ հարցերի հետ միասին ավել է նաև հայ իրականության խոր պատկերը, բացահայտել դասակարգային հակամարտությունները, մանցու հարված հասցրել հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությանը («սպեցիֆիկներին»), ցույց է տվել Հայաստանի բանվոր դասակարգի ու բուրժուազիայի միջև եղած հակասությունները, որոնք կարող են լուծվել միայն մահու և կենաց պայքարի միջոցով։ Նույն թերթում տպագրվել է Ի. Վ. Ստալինի՝ «Պրոլետարների դասակարգը և պրոլետարների պարտիան» (№ 3), «Զինված ապստամբությունը և մեր տակտիկան» (№ 7) և ուրիշ բազմաթիվ աշխատություններ։ 1905 թվի հունիսին հավլաբարի ընդհանուր հրոչակավոր տպարանում հայերեն լեզվով հրատարակվել է Ի. Վ. Ստալինի՝ «Համառոտակի պարտիական տարաձայնությունների մասին» (այդ հրատարակությամբ թարգմանված է «Մի թեթև ակնարկ կուսակցական տարաձայնությունների մասին»), մի քիչ ավելի ուշ՝ «Երկու գոտեմարտ» աշխատությունները։ Ինչպես այդ երկերը, այնպես էլ ռուսերենյան մյուս հոդվածները, կոչերը, որոնք տպագրվել են նախահեղափոխական բոլշևիկյան հայ պարբերական մամուլում, հագարավոր օրինակներով տարածվել են հայ աշխատավորության մեջ, մոբիլիզացրել նրան ու պայքարի հանել ցարական կարգերի դեմ։

Ընկեր Ստալինի երկերը հայերեն լեզվով միլիոնավոր տիրաժով հրատարակվեցին միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո։ Գրախոսվող բիբլիոգրաֆիական ցանկից երևում է, որ Ի. Վ. Ստալինի աշխատություններն ու աշխատությունների ժողովածուները մինչև 1930 թվը, այսինքն անցած 29 տարվա ընթացքում, Սովետական Հայաստանում առանձին գրքերով լույս են տեսել 191 անգամ՝ 3 միլիոնից ավելի տիրաժով։ Ընկեր Ստալինի «Լենինի մասին» աշխատությունը հայերեն լեզվով հրատարակվել

«Ի. Վ. Ստալինի աշխատությունների հայերեն հրատարակությունների բիբլիոգրաֆիա» (Սովետական շրջան), կազմեցին Լ. Մելքումյանն և Վ. Կարմենյանը։ Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1950 թ., 99 էջ։

է 21 անգամ, «ՍՍՌՄ Կոնստիտուցիայի նախագծի մասին» Սովետների 8-րդ Արտակարգ համագումարում տված պատմական զեկուցումը՝ 11 անգամ, «Բոլշևիզմի պատմության մի քանի հարցերի մասին» հոդվածը՝ 10 անգամ, «Գլխապտույտ հաջողություններից» հոդվածը՝ 10 անգամ, «Առաջին հնգամյակի հանրագումարները» հրատարակվել է 6 անգամ։

Համ Կ(բ)Պ Կենտկոմին կից Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի Հայկական Ֆիլիալի հրատարակությամբ արդեն լույս է տեսել Ի. Վ. Ստալինի Երկերի մինչև 12-րդ հատորը։

Ընկեր Ստալինի «Լենինիզմի հարցերը» դիրքը հայերեն լեզվով լույս է տեսել չորս անգամ, ավելի քան 60 հազար տիրաժով, իսկ «Համ Կ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց»-ը հրատարակվել է ավելի քան 270 հազար օրինակ տիրաժով։

Գերմանա-ֆաշիստական դավթիչների դեմ սովետական ժողովրդի մղած Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ընկեր Ստալինի ունեցած ելույթները, զեկուցումներն ու հրամանները ժողովված են «Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին» գրքում, որը ունեցել է հայերեն չորս հրատարակություն։

* * *

1901-ից մինչև 1907 թ.թ. ժամանակաշրջանում գրված երկերում, որոնց մեծ մասը ժամանակին հրատարակվել է բոլշևիկյան հայ մամուլում, ընկեր Ստալինը պայքար է ծավալում դանազան հակամարքսիստական և օպորտունիստական հոսանքների դեմ, կռում և կոփում Անդրկովկասի լենինյան-իսկրայական կազմակերպությունները։ Իր երկերում նա հիմնավորում և պաշտպանում է մարքս-լենինյան ուսմունքի սկզբունքները։

Բոլշևիկյան պարտիայի թեորիական պատրաստության ասպարեզում մեծագույն դեր է խաղացել Ի. Վ. Ստալինի «Անարխիզմ, թե սոցիալիզմ» աշխատությունը, որը առաջին անգամ տպագրվել է առանձին հոդվածների ձևով 1906—1907 թվականներին վրացերեն՝ բոլշևիկյան թերթերում։ Այդ նշանավոր աշխատության մեջ ընկեր Ստալինը վճռականորեն հանդես է գալիս անդրկովկասյան անարխիստների դեմ, որոնք հատկապես ակտիվացան 1905 թվի վերջին ու 1906 թվի սկզբին և կատաղի կերպով հարձակվում էին մարքսիզմի և ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատիայի վրա։ Անարխիզմի դեմ ընկեր Ստալինի մղած պայքարը պարտիականության վայելուն օրինակ է, օրինակ այն բանի, թե ինչպես պետք է մերկացնել բանվոր դասակարգի թշնամիներին, որոնք քողարկվում են նրա բարեկամների դիմակով։ Ընկեր Ստալինը համոզիչ կերպով ցույց է տվել, որ անարխիստները մարքսիզմի, պրոլետարական ռևոլուցիայի ամենաուխերիմ թշնամիներն են։ Ընկեր Ստալինը իր այդ նշանավոր աշխատության մեջ ոչնչացնող քննադատության է ենթարկել ռեֆորմիզմը, ցույց է տվել նրա քայքայումն ու այլասերումը։ «Անարխիզմ, թե սոցիալիզմ» աշխատության մեջ ընկեր Ստալինը փայլուն կերպով շարադրել և դարպացրել է մարքսիստական պարտիայի թեորիական հիմքերը՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը։ Ի. Վ. Ստալինի վաղ շրջանի այդ ականավոր երկը արժեքավոր ավանդ է մարքսիզմ-լենինիզմի գանձարանում։

«Համառոտակի պարտիական տարաձայնությունների մասին», «Պատասխան սոցիալ-դեմոկրատին» և այլ հոդվածներում ընկեր Ստալինը հանդես է եկել մարքսիստական պարտիայի իդեոլոգիական հիմունքների վրճռական պաշտպանությամբ։

1907—1913 թ.թ. ժամանակաշրջանում գրած աշխատություններում ընկեր Ստալինը զարգացնում է բոլշևիկյան պարտիայի տակտիկական հարցերը՝ կապված Ռուսաստանի 1905—1907 թ.թ. բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի, այդ ռևոլուցիայի պարտության ու Ռուսաստանում ռեակցիայի ծավալման նոր պայմանների հետ, հասցնելով այն մինչև բանվորական շարժման նոր վերելքի սկիզբը։ «Պարտիայից» և «Նամակներ Կովկասից» աշխատություններում ընկեր Ստալինը տալիս է պարտիական կազմակերպությունների վիճակը, վճռական հարվածներ է հասցնում ֆրակցիոնիզմին, ուլտիմատիզմին և լիկվիդատորությանը, առաջադրում պարտիայում եղած ճգնաժամի հաղթահարման պլանը։

Բանվորական շարժման վերելքի շրջանում գրած մի շարք զեկավարող հոդվածների հետ միասին ընկեր Ստալինը գրել է «Մարքսիզմը և ազգային հարցը» խոշոր տեսական ու ծրագրային աշխատությունը։ Մարքսիստական այդ հոչակավոր աշխատությունը հայերեն լեզվով հրատարակվել է մի շարք անգամ։ Վ. Ի. Լենինը բարձր գնահատելով այդ երկը, գրել է. «Մարքսիստական թեորիական գրականության մեջ... Ս. Դ. ազգային ծրագրի հիմունքները արդեն լուսաբանված էին վերջին ժամանակներս (այստեղ առաջին հերթին աչքի է ընկնում Ստալինի հոդվածը)։ Այդ աշխատության մեջ ընկեր Ստալինը-

առաջին անգամ տալիս է ազգի մարքսիստական ընորոշումը, ջախջախիչ հարված է հասցնում ավստրիական դպրոցին, միջազգային օպորտունիզմին։ Հանձին ընկեր Ստալինի «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատության՝ բոլշևիկյան պարտիան համաշխարհային առաջին իմպերիալիստական պատերազմի նախօրյակին ուներ ազգային հարցի վերաբերյալ մարքսիստական հստակ ծրագիր։ Ընկեր Ստալինի այդ աշխատությունը «... Բոլշևիզմի թեորիան և ծրագրային դեկլարացիան էր ազգային հարցի վերաբերյալ»[1]

Մարքսիզմ-լենինիզմի գանձարանում խոշոր ավանդ են հանդիսանում Ի. Վ. Ստալինի 1917 թվի հոկտեմբերյան ռևոլուցիայի նախապատրաստման և իրագործման շրջանում գրած երկերը, որոնք հրատարակված են նրա երկերի 3-րդ և 4-րդ հատորներում։ 1917 թվին ընկեր Ստալինը Վ. Ի. Լենինի հետ սերտ համագործակցությամբ ղեկավարել է բոլշևիկյան պարտիան և Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի գրոհները։ Ի. Վ. Ստալինի 1917—1920 թ.թ. գրած շատ երկեր, այդ թվում «Թյուրքահայաստանի» մասին», «Ինչպե՞ս Սովետական Հայաստանը» նշանավոր հոդվածները, հայերեն տպագրվել են բազմաթիվ անգամ։

1917 թվի դեկտեմբերի 31-ին «Պրավդա»-յում հրապարակված «Թյուրքահայաստանի» մասին» խորագրով հոդվածում ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ դիվանագիտական կոմբինացիաների հին ուղին Հայաստանի ազատագրության ուղին չէ։ «Պարզ է դառնում,—գրել է Ի. Վ. Ստալինը,—որ հնշված ժողովուրդների ազատագրության ուղին անցնում է Ռուսաստանում հոկտեմբերին սկսված բանվորական ռևոլուցիայի միջով։ Այժմ պարզ է ամենքի համար, որ Ռուսաստանի ժողովուրդների բախտը, իսկ առանձնապես հայ ժողովրդի բախտը, սերտորեն կապված է հոկտեմբերյան ռևոլուցիայի բախտի հետ»[2]

Հայ ժողովրդի մեծ ազատաբար ու բարեկամ Ի. Վ. Ստալինը 1920 թվի դեկտեմբերի 4-ին «Պրավդա»-յում տպագրված «Ինչպե՞ս Սովետական Հայաստանը» վերնագրով հոդվածում գրում է. «Տանջված ու բազմաչարչար, Անտանտի և դաշնակների ոգորմածությամբ սովի, քայքայման ու գաղթի մատնված Հայաստանը,—բոլոր «բարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանը այժմ իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց Սովետական երկիր։ Ո՛չ Անգլիայի, դայկական շահերի «գարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ոչ Վիլսոնի տխրահռչակ ասասնևչորս կետերը, ոչ Ազգերի լիգայի մեծագոռող խոստումները Հայաստանի կառավարման իր «մանդատով»—չկարողացան (և չէին կարող) փրկել Հայաստանը կոտորածից ու ֆիզիկական բնաջնջումից։ Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»[1]

Ընկեր Ստալինի կյանքում կարևոր նշանակություն ունի պարտիայի անլեգալ կերպով տեղի ունեցած 6-րդ համագումարի (1917 թ. հուլիս—օգոստոս) աշխատանքների ղեկավարումը։ Այդ համագումարում ընկեր Ստալինը հանդես գալով Կենտկոմի հաշվետու զեկուցումով և քաղաքական դրության վերաբերյալ զեկուցումով, հստակ կերպով ձևակերպեց բոլշևիկյան պարտիայի խնդիրներն ու տակտիկան սոցիալիստական ռևոլուցիայի համար մղվող պայքարում։ Ընկեր Ստալինը այդ ժամանակ հակահարված է տալիս տրոցկիստներին, որոնք անհնարին էին համարում սոցիալիզմի հաղթանակը Ռուսաստանում։

Ընկեր Ստալինը ջախջախիչ հարվածներ հասցնելով տրոցկիստներին, ցույց է տալիս, որ «բացառված չէ այն հնարավորությունը, որ հենց Ռուսաստանը հանդիսանա սոցիալիզմի ուղին հարթող երկիրը։ Պետք է դեն շպրտել այն հնացած պատկերացումը, թե միայն Եվրոպան կարող է ուղի մատնանշել մեզ։ Գոյություն ունի դոգմատիկ մարքսիզմ և ստեղծագործական մարքսիզմ։ Ես կանգնած եմ վերջինի հողի վրա»[2]

Կյանքը ցույց տվեց ընկեր Ստալինի մարգարեական խոսքերի ճշմարտությունը, Ռուսաստանը առաջինն էր, որ ցույց տվեց սոցիալիզմի ուղին։

1921 թվի հուլիսի 6-ին, ընկեր Ստալինը Թիֆլիսի պարտակտիվի ժողովում՝ «Կոմունիզմի հերթական խնդիրները Վրաստանում և Անդրկովկասում» հարցի վերաբերյալ տված զեկուցման մեջ Անդրկովկասի բոլշևիկներին դինեց մարքսիստական հստակ ծրագրով՝ նացիոնալիզմը արմատախիլ անելու. Կովկասի ժողովուրդների եղբայրական համագործակցությունն է՛լ ավելի ամրապնդելու համար։

---

1 Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին. Համառոտ կենսագրություն, Հայպետհրատ, Երևան, 1949 թ., էջ 57։

2 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 30—31, Հայպետհրատ, Երևան։

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 458, Հայպետհրատ, Երևան։

2 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 3, էջ 213, Հայպետհրատ, Երևան։

Ընկեր Ստալինը Անդրկովկասի բոլշևիկներից պահանջեց «...Վերացնել նացիոնալիստական մնացուկները, շիկացած երկաթով ոչնչացնել դրանք և ստեղծել փոխադարձ վստահության առողջ մթնոլորտ՝ Անդրկովկասի ազգությունների աշխատավորության մեջ։ Ջախջախել նացիոնալիզմի հրեշին և ստեղծել ինտերնացիոնալիզմի առողջ մթնոլորտ՝ Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկանների տնտեսական ջանքերի միավորման գործը հեշտացնելու համար, պահպանելով այդ ռեսպուբլիկաների անկախությունը,—ահա թե ինչ էր պահանջում ընկեր Ստալինը։

Ընկեր Ստալինը Վ. Ի. Լենինի հետ միասին ստեղծել է մեր երկրի ազգային սովետական ռեսպուբլիկաները, նրանց միավորել մեկ միութենական պետության՝ ՍՍՌՄ-ի մեջ։ 1922 թվականի դեկտեմբերի 30-ին Սովետների համամիութենական 1-ին համագումարում Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի առաջարկությամբ պատմական որոշում ընդունվեց Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության—ՍՍՌՄ կազմելու մասին։ Համագումարում հանդես գալով, ընկեր Ստալինն ասում է. «Սովետական իշխանության պատմության մեջ այս օրը բեկման օր է։ Այն ուղենիշ է դնում հին, արդեն անցած շրջանի, երբ սովետական ռեսպուբլիկանները թեպետև միասին էին գործում, բայց առանձին-առանձին էին ընթանում, ամենից առաջ դրդված լինելով իրենց գոյության հարցով, և նոր, արդեն սկսված ժամանակաշրջանի միջև, երբ սովետական ռեսպուբլիկանների անջատ գոյությանը վերջ է դրվում, երբ ռեսպուբլիկանները միավորվում են իրրև միասնական միութենական պետություն՝ տնտեսական փլուզման դեմ հաջող պայքարելու համար, երբ սովետական իշխանությունն արդեն ոչ միայն գոյության մասին է մտածում, այլև այն մասին, որ զարգանա իրրև լուրջ միջազգային ուժ, որը կարողանա ներգործել միջազգային իրադրության վրա, որը կարողանա փոխել այն հողուտ աշխատավորության շահերի»[1]

ՍՍՌՄ-ի ստեղծումը լենինյան-ստալինյան ազգային իմաստուն քաղաքականության խոշոր հաղթանակն էր, նրա մեծ տրիումֆը։

Մարքսիզմ-լենինիզմի գանձարանում խոշոր ներդրում են հանդիսանում Ի. Վ. Ստալինի «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և ռուսական կոմունիստների տակտիկան», «Լենինի մասին», «Լենինիզմի հիմունքների մասին» և այլ երկերը։ «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և ռուսական կոմունիստների տակտիկան», աշխատությունը, որն ընկեր Ստալինը ավարտել է 1924 թվի դեկտեմբերին, հայերեն հրատարակվել է 10 անգամ՝ տասնյակ հազարավոր տիրաժով։

Ընկեր Ստալինը իր բազմաթիվ այլ աշխատությունների հետ միասին «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և ռուսական կոմունիստների տակտիկան» գրքում (այդ երկը Ի. Վ. Ստալինի «Հոկտեմբերի ուղիներում» հոդվածների ժողովածուի առաջարանն է) խորտակիչ հարվածներ է հասցրել տրոցկիզմին, ջախջախել է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմությունը խեղաթյուրելու և բոլշևիկյան պարտիայի ու նրա առաջնորդ Վ. Ի. Լենինի դեկավար դերը մթագնելու ուղղությամբ կատարված տրոցկիստական փորձերը։ Ի. Վ. Ստալինի «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և ռուսական կոմունիստների տակտիկան» աշխատությունը ստեղծագործական մարքսիզմի հանճարեղ երկ է։

Ի. Վ. Ստալինը զարգացնելով և հարստացնելով մարքսիզմ-լենինիզմը նորանոր դրույթներով, ստեղծել է ամբողջական և լիակատար ուսմունք՝ սոցիալիստական պետության մասին։ Համ Կ(բ)Պ 18-րդ համագումարում տված քաղաքական հաշվետվության մեջ ընկեր Ստալինը է՛լ ավելի զարգացնելով սոցիալիստական ռևոլյուցիայի լենինյան թեորիան, մեկ երկրում սոցիալիզմի կառուցման թեորիան, տվել է սոցիալիստական պետության զարգացման, իրադրությունը փոխվելու հետևանքով նրա ֆունկցիաների փոփոխման էտապների ծավալուն վերլուծություն, ընդհանրացրել Սովետական պետության կառուցման ամբողջ փորձը, հանգել այն հետևության, որ կոմունիզմի օրով անհրաժեշտ կլինի պահպանել պետությունը այն դեպքում, եթե շարունակի գոյություն ունենալ կապիտալիստական շրջապատումը։

Սոցիալիստական պետության, իրրև պրոլետարիատի դիկտատուրայի ձևի վերաբերյալ ընկեր Ստալինի աշխատությունները, ճառերը, զեկուցումները մեծ տիրաժներով թարգմանվել և հրատարակվել են հայերեն։

«ՌԿ(բ)Պ 14-րդ կոնֆերանսի աշխատանքների հանրագումարի առթիվ», «Հարցեր և պատասխաններ», «ՀամԿ(բ)Պ 14-րդ համագումարը» և այլ աշխատություններում և զեկուցումներում ընկեր Ստալինը բացառիկ խորությամբ զարգացրել է մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության ուսմունքը։ «Լենինիզմի հարցերի շուրջը», «Սո-

[1] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և ազգային գաղութային հարցը, էջ 153։

վետական Միության տնտեսական դրության և պարտիայի քաղաքականության մասին» ու այլ հոդվածներում, որոնք մի քանի հրատարակություններ են ունեցել հայերեն լեզվով, Ի. Վ. Ստալինը հանճարեղ կերպով զարգացրել է Լենինի ուսմունքը մեկ, առանձին վերցրած երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը, սոցիալիստական շինարարության հաղթանակը ՍՍՌՄ-ում։ Ընկեր Ստալինը մինչև վերջ ջախջախել ու բնաջնջել է տրոցկիստական-զինովևական կապիտուլյանտների կապիտալիզմի վերականգնման ռեակցիոն իդեոլոգիան, մերկացրել է «նոր օպոզիցիայի» տրոցկիստական-մենշևիկյան էությունը և առաջ է մղել սոցիալիզմի կառուցման մեծ գործը։

«Դարձյալ սոցիալ-դեմոկրատական թերման մասին մեր պարտիայի մեջ» Կոմինտերնի Գործադիր Կոմիտեի 1926 թվի դեկտեմբերյան 7-րդ ընդլայնված նիստում՝ Ի. Վ. Ստալինի տված զեկուցումը և եզրափակման խոսքը նրա ամենափայլուն աշխատություններից են, որոնք, բացի Ի. Վ. Ստալինի երկերի 9-րդ հատորում տպագրվելուց, հայերեն լեզվով լույս են տեսել նաև 1935 թվին՝ մի քանի հազար օրինակ տիրաժով։

Ի. Վ. Ստալինը բաղմաթիվ աշխատություններ է նվիրել Չինաստանի ռևոլուցիոն շարժումներին՝ «Զրույց Սուն-յաթսենի անվան համալսարանի ուսանողների հետ», «Չինաստանի ռևոլուցիան և Կոմինտերնի խնդիրները», «Նոթեր ժամանակակից թեմաների շուրջը» և այլն, որոնք թարգմանվել և հրատարակվել են հայերեն։

Համկ(բ)Պ 15-րդ համագումարում տված քաղաքական հաշվետվության մեջ ընկեր Ի. Վ. Ստալինը տվեց սոցիալիստական արդյունաբերության անշեղ, հարաճուն վերելքի, երկրի ժողովրդական տնտեսության մեջ նրա դերի բարձրացման, սոցիալիստական սեկտորի տեսակարար կշռի բարձրացման պատկերը։ Ղեկավարվելով Համկ(բ)Պ 15-րդ համագումարի որոշումներով և ընկեր Ստալինի իմաստուն ցուցումներով, բոլշևիկյան պարտիան լայն աշխատանք ծավալեց գյուղի կոլեկտիվացման ուղղությամբ և 1929 թվի վերջին անցավ համատարած կոլեկտիվացման հիման վրա, կուլակության՝ որպես դասակարգի վերացման քաղաքականությանը։

Հայերեն լեզվով մի շարք հրատարակություններ են ունեցել Ի. Վ. Ստալինի Համկ(բ)Պ 16, 17 և 18-րդ համագումարում տված քաղաքական հաշվետվությունները, «Պատասխան ընկեր կոլխոզնիկներին», «Մեծ բեկման տարին», «Տնտեսվարների խնդիրների մասին», «Պատասխան ընկեր Իվանովի նամակին», «Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին», «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի 24-րդ տարեդարձը», «Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին» և այլ աշխատությունները։

Կոլխոզային կարգերի ամրապնդման և նրա հաղթանակի համար վճռական նշանակություն ունեցան Ի. Վ. Ստալինի «Գլխապտույտ հաջողություններից», «Պատասխան ընկեր կոլխոզնիկներին» հոդվածները։ Այդ աշխատություններում ընկեր Ստալինը մինչև վերջ մերկացրել է կոլխոզային շինարարության մեջ բոլշևիկյան պարտիայի քաղաքականության «ձախ» խոտորումները, տեղական աշխատողների կողմից սխալ մոտեցումը մի ջակին—կոլխոզային շինարարության գործում կամավորության լենինյան սկզբունքի խախտումը, տվյալ էտապում կոլխոզային շարժման գլխավոր ձևի՝ Գյուղատնտեսական արտելի վրայով թռչելն ու կոմունայի անցնելը։

Ի. Վ. Ստալինի այդ աշխատությունները օգնեցին պարտիական կազմակերպություններին՝ արագորեն ուղղելու թույլ տված սխալները, ջախջախիչ հարվածներ հասցնելու մեր թշնամիներին։ Ի. Վ. Ստալինի «Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթացը», որը հանդիսանում է բոլշևիզմի գաղափարական հզոր զենքը, հայերեն լեզվով հրատարակվել է բաղմաթիվ անգամ՝ «Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթացը» ստեղծագործական մարքսիզմի տիպար է, նշանավոր ավանդ՝ մարքսիզմ-լենինիզմի գանձարանում։

«Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց»-ում խորը կերպով շարադրված է բոլշևիկյան պարտիայի հերոսական պատմությունն ու տեսությունը, սովետական ժողովրդի անօրինակ սխրագործությունները մեր երկրում կոմունիզմի հոյակապ շենքը կառուցելու համար մղվող պայքարում։

«Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց»-ում տրված է ռուսական երեք ռևոլուցիաների պատմությունը, քաղաքացիական կռիվների և իմպերիալիստական ինտերվենտների դեմ մղված պայքարի պատմությունը, սոցիալիստական շինարարության հերոսական պատմությունը։

Բոլշևիկյան պարտիայի աշխարհայացքը դիալեկտիկական և պատմական մատերիալիզմն է։ Ընկեր Ստալինը իր հոչակավոր աշխատու-

թյան մեջ անգուղական կերպով տվել է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի շարադրանքը, մի նոր բարձր աստիճանի է հասցրել մարքսիստական փիլիսոփայությունը։ Ի. Վ. Ստալինի «Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին» աշխատությունը մարքս-լենինյան փիլիսոփայական մտքի իսկական գագաթն է։

Ընկեր Ի. Վ. Ստալինը «Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց»-ում ամբողջ ուժով ընդգծում է մարքս-լենինյան տեսության տիրապետման, քննադատության և ինքնաքննադատության ծավալման անհրաժեշտությունը։

«Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթացը» մարքսիստական գրականության պատմության մեջ ամենատարածված երկն է։ Միայն ՍՍՌՄ-ում անցած 12 տարիներին «Համառոտ դասընթացը» հրատարակվել է մոտ 40 միլիոն տիրաժով։

«Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթացը» աշխատավորների կոմունիստական դաստիարակության հզոր միջոց է։ Այն անգնահատելի գանձ է ամբողջ աշխարհի աշխատավոր մարդկության և եղբայրական կոմունիստական ու բանվորական պարտիաների համար։ Եղբայրական կոմունիստական պարտիաները «Համառոտ դասընթաց»-ից սովորում են բոլշևիզմի հարուստ փորձը։ Ընկեր Ստալինի «Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին» աշխատությունը խոշոր ազդեցություն ավանդ է հանդիսանում մարքս-լենինյան թեորիայի գանձարանում։ Նրանում տպագրված Ի. Վ. Ստալինի ելույթները, ճառերը, զեկուցումները, հրամանները փայլուն կերպով ցույց են տալիս սովետական ժողովրդի հերոսական պայքարը, սովետական հասարակակարգի, պետական կարգի, սովետական հայրենասիրության, ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական համագործակցության ուժն ու կենսունակությունը։

«Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին» աշխատության մեջ ընկեր Ստալինն ընդհանրացրել է Սովետական պետության գործունեության փորձը՝ պատերազմի պայմաններում, մատնանշել է Սովետական պետության տնտեսական և ռազմական հզորության հետագա ամրապնդման ուղիները։ Այդ գրքում տպագրված ընկեր Ստալինի ելույթներում և հրամաններում նոր զարգացում է ստացել սովետական ռազմական գիտությունը, սովետական սոցիալիստական պետության, նրա ֆունկցիաների և նրա ուժի ու հզորության աղբյուրների հետագա ամրապնդման ուղիները։

Հայրենական Մեծ պատերազմում Սովետական Միության տարած պատմական հաղթանակների վեհ պատկերը և սոցիալիստական հասարակության ուժերի հետագա զարգացման հոյակապ ծրագիրը ընկեր Ստալինը ծավալուն կերպով տվել է Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում 1946 թվականի փետրվարի 9-ին ունեցած իր ելույթում։ Ընկեր Ստալինի պատմական այդ ելույթը, որ հանդիսանում է մեր երկրում կոմունիզմի կառուցման ստալինյան մեծ ծրագիրը, հայերեն լեզվով հրատարակվել է ավելի քան տասն անգամ մի քանի հարյուր հազար օրինակ տիրաժով։

Ր. Վ. Ստալինի աշխատությունների հայերեն հրատարակությունների գրախոսվող բիբլիոգրաֆիան ավելի կշահեր, եթե կազմողները օգտագործեին հայ պարբերական մամուլում, Սովետական Հայաստանի տերիտորիայից դուրս՝ Մոսկվա, Լենինգրադ, Բաքու, Թբիլիսի, Դոնի Ռոստով, Կրասնադար, Ստեփանակերտ և այլ քաղաքներում ու վայրերում հայերեն հրատարակված Ի. Վ. Ստալինի երկերը։ Բիբլիոգրաֆիայում նույնիսկ տեղ չեն գտել Սովետական Հայաստանի արդյունաբերական-կուլտուրական երկրորդ քաղաքում՝ Լենինականում, ժամանակին հայերեն լեզվով տպագրված Ի. Վ. Ստալինի երկերը։ Մեզ հայտնի է, որ նույն հեղինակները տպագրության են պատրաստել մարքսիզմի կլասիկների՝ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի աշխատությունների հայերեն հրատարակությունների մեծածավալ բիբլիոգրաֆիան։ Ցանկալի է, որ այդ բացը լրացվի մարքսիզմի կլասիկների երկերի հայերեն հրատարակությունների բիբլիոգրաֆիայում։

Ընկեր Ստալինի երկերը, որոնք մարքսիզմ-լենինիզմի թեորիայի ստեղծագործական զարգացման հոյակապ տիպարներն են, պարտիայի և բանվոր դասակարգի ձեռքում գաղափարական հզոր զենք են հանդիսանում կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարում։ Դրանք մեր մարդկանց մղում են ստեղծագործական, աշխատանքային նոլուանոր սխրագործություններին։ Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի երկերը, նրանց կյանքն ու գործունեությունը պայծառ օրինակ են սովետական ժողովրդի համար։

Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի յուրաքանչյուր երկի հրատարակությունը աչքի ընկ-

ող իրադարձություն է մեր պարբիայի և միջազգային ամբողջ բանվորական շարժման գաղափարական կյանքում։ Ուսումնասիրելով ընկեր Ստալինի երկերը, սովետական մարդիկ հպարտությամբ են տեղորվում գեպի իրենց հարազատ համամիութենական Կոմունիստական (բոլշևիկյան) Գարտիան, որը մեր բոլոր հաղթանակների կազմակերպիչն ու ոգեշնչողն է, մեր դարաշրջանի միտքը, խիղճն ու պատիվը։

Սովետական գիտնականները խորը ուսումնասիրելով ընկեր Ստալինի երկերը, անսպառ ուժ և եռանդ են քաղում նորանոր ստեղծագործությունների համար։ Ստալինյան երկերը լուսավորում են սովետական գիտության հանապարհը և ապահովում են նրա նորանոր հաղթանակները։

Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հ. ՀՈՒ. ԳԱՊ. Գրադ.
ԳՐԱԴԱՐԱՆ